

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

NIKOLAY HOVHANNISYAN

ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ
ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

THE ARMENIAN COMMUNITIES
OF THE MIDDLE EAST AND SYRIA
AND THEIR PERSPECTIVES



ԵՐԵՎԱՆ Լ 2015 Լ YEREVAN

1077324

323.15

ԿՐԿՆՕՐԻՆԱԿ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ


ՄԵՐԶԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

A10049C

ԵՐԵՎԱՆ



2015



Խմբագիր՝ Ալեքսանդր Սաֆարյան
Երևանի պետական համալսարանի
թյուրքագիտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր

Հովհաննիսյան Նիկոլայ
Հ 854 ՄԵՐԶԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ՄԻՐԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ԵՎ
ՆՐԱՆՑ ՀԵՌԱՆՎԱԿԱՐՆԵՐԸ / Ն. Հովհաննիսյան.- Եր.: Լիմուշ, 2015.- 56 էջ:

2014թ. հունիսի 11-12-ին Սբ. Էջմիածնի Մայր Աթոռում զումարվեց Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդի (ԵՀԽ) միջազգային Համաժողովը նվիրված " Ճգնաժամը Սիրիայում. մարտահրավերներ կրոնական համայնքներին" շատ կարևոր հարցի քննարկմանը: Խոսքը Մերձավոր Արևելքի քրիստոնյա կրոնական համայնքների մասին է, որոնց զյուրությունը խիստ վտանգված է զանազան ահաբեկչական, ծայրահեղական և արմատական հակաքրիստոնյա ուժերի ու կազմակերպությունների ծրագրավորված գործողությունների հետևանքով. որոնց թիկունքում կանգնած են տարածաշրջանային որոշ պետություններ: Այդ ներկայացուցչական Համաժողովին մասնակցում էին Ամենայն Հայոց Կաթողիկոս Վեհափառ Հայրապետ Գարեգին Երկրորդը, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար Օլաֆ Ֆիկսե Թվեյտը, Հռոմի պապի ներկայացուցիչ կարդինալ Մակ Կարիկը, Արևելյան քրիստոնյա երևելի եկեղեցապետերը և այլն (տես մասնակիցների ցանկը): Մասնակիցները միակարծիք էին այն հարցում, որ, եթե ահաբեկչական գործողությունները, հալածանքները և հետապնդումները քրիստոնյա համայնքների դեմ շարունակվեն, ապա ոչ հեռու ապագայում Մերձավոր Արևելքը քրիստոնյաթափ կլինի: Արդեն իսկ հիմա քրիստոնյաների թիվն այնտեղ խիստ նվազել է և նրանք արդեն կորցրել են իրենց երբեմնի ակնառու դերակատարումը:

Տողերիս հեղևակը Սբ. Էջմիածնի Մայր Աթոռի հրավերով մասնակցում էր այդ համաժողովին և նրա առաջարկությամբ Համաժողովին ներկայացրեց "Մերձավոր Արևելքի և Սիրիայի հայ համայնքները և նրանց հետանկարները" զեկուցումը, որի անգլերեն տեքստը ԵՀԽ-ի գլխավոր քարտուղար Օլաֆ Թվեյթի առաջարկությամբ ուղարկվեց Եվեյցարիա՝ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի շտաբ-կայան:

Նման Համաժողովի զումարումը Մայր Աթոռ սուրբ Էջմիածնում վկայում է Հայ Առաքելական Եկեղեցու միջազգային բարձր հեղինակության և համաշխարհային քրիստոնյա էկումենիկ շարժման կարևոր և առաջատար գործոն լինելու մասին:

Մտորն ներկայացվում են ԵՀԽ համաժողովի Ծրագիրը և մեր զեկուցման հայերեն ու անգլերեն տեքստերը:

Նվիրվում է Մերձավոր Արևելքում մուլեռանդ ահաբեկիչների՝
հայ, հույն, ասորի, կաթոլիկ քաղղեական, ուղղափառ և այլ
քրիստոնյա զոհերի հիշատակին, տնավեր եղած ու իրենց
բնօրրանից վտարված բոլոր տառապյալներին

Հրատարակվում է

«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ

ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ»

հոգածությամբ, որի համար հեղինակն արտահայտում է իր
խորին երախտագիտությունը

CRISIS IN SYRIA:

CHALLENGES FOR FAITH COMMUNITIES

International Consultation

Mother See of Holy Etchmiadzin

Etchmiadzin, Armenia

11-12 June 2014

Tuesday, June 10

Arrival of participants and accommodation

Wednesday, June 11

08:00 Breakfast

08:30 Ecumenical Prayer in the Chapel

09:30 Opening Session

Moderator: His Grace Bishop Hovakim Manukian

- Greetings of His Holiness KAREKIN II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians
- Greetings of His Excellency Hovik Abrahamyan, Prime Minister of the Republic of Armenia
- Greetings of Rev. Dr Olav Fykse Tveit, General Secretary of the World Council of Churches
- Greetings of His Eminence Theodore Cardinal McCarrick on behalf of His Holiness Pope Francis Bishop of Rome and Supreme Pontiff of Catholic Church
- Greetings of His Holiness Moran Mor Ignatius Aphrem II, Patriarch of Antioch and All the East of the Syrian Orthodox Church
- Greetings from Middle East Council of Churches and the

representatives of the Churches

11:00 Coffee break

11:30 Session I

Moderator: H. E. Theodore Cardinal Edgar Mccarrick, Archbishop Emeritus of Washington-Political Developments in Syria and Humanitarian Perspectives

- o Presentation by Mr Antoine Laham, Senior Political Advisor, Office of the Joint Special Representative of the United Nations and the League of Arab States for Syria,

- o Discussion on role of the Churches in building bridges and alleviating the suffering of people.

13:00 Lunch break

15:00 Session II

Moderator: His Eminence Archbishop Jean Kawak

-The Presence and Witness of the Christians in the Middle East in the Context of the Transformations in the Arab World

- o Presentation by Michel Nseir, WCC Programme Executive for the Middle Eas

- o Input from Churches in the region

- o Discussion on the situation of Christians in the region, and particularly in Syria

16:30 Coffee break

17:00 Session III

Moderator: His Eminence Archbishop Dr Vicken Aykazian

-The Armenian Communities of the Middle East and Syria and Their

Perspectives

- o Presentation by Dr Nicolai Hovanishian, Advisor of the Director of the Institute of Oriental Studies, National Academy of Sciences in Armenia
- o Input from Churches in the region
- o Discussion
- o Composition of Communique Drafting Committee

18:30 Break

19:30 Dinner hosted by the Armenian Syrian Community and Mr. Gabriel Ghenberji.

Thursday, June 12

09:00 Ecumenical Prayer in the Chapel

09:30 Departure from the Mother See of Holy Etchmiadzin

-Visit to Memorial of Armenian Genocide and Prayer

13:00 Lunch

15:00 Session IV

Moderator: Rev. Dr Olav Fykse Tveit, WCC General Secretary -

-Report of the Drafting Committee: Communique (See page 47-48)

16:00 Press conference

19:00 Dinner hosted by His Holiness KAREKIN II, Supreme Patriarch and Catholicos of All Armeni

Friday, June 13 Departures



CRISIS in SYRIA:

Challenges for Faith Communities

11-12 June, Mother See of Holy Etchimidzin. Consultation

List of invitees

His Holiness KAREKINII, Supreme Patriarch and Catholicos of All Armenians,
Co-President of the WCC Mr Hovik Abrahamyan, Prime Minister of the
Republic of Armenia

N	Name	Church
1	H. G. Bishop Mikayel Ajapahyan	Primate of Shirak Diocese
2	Very Rev. Fr. Shahe Ananyan	Head of Publishing Department
3	H. G. Bishop Abdo Arbach	Metropolitan of Horns - Syria The Melkite Greek Catholic Patriarchate Of Antioch And All East
4	H. E. Archbishop Dr Vicken Aykazian	Armenian Apostolic Church
5	Rev. Canon Anthony Ball	Rector of Worth, Anglican Church
6	H. G. Bishop Demetrios Charbak	Greek Orthodox Patriarchate of Antioch and All the East
7	Dr Elias El-Halabi	Associate General Secretary, Middle East Council of Churches
8	Prof. Dr Leonardo Emberti Gialloreti	Community of Sant' Egidio

9	Bishop Em. Dr Johannes Friedrich	Evangelical Church in Germany
10	H.G. Bishop Bagrat Galstanyan	Head of the Social Doctrine Department
11	H. E. Archbishop Dionisios Jean Kawak	Syrian Orthodox Patriarchate
12	Mr Antoine Laham	Senior Political Advisor Office of the Joint Special Representative of the United Nations and the League of Arab States for Syria
13.	H.G. Bishop Hovakim Manukyan	Head of Inter-Church Relations Department
14	H. E. Cardinal Theodore Edgar McCarrick	Archbishop Emeritus of Washington
15	H. E. Archbishop Rafael Minasyan	Primate of Armenian Catholics in Armenia, Georgia and Eastern Europe
16	H. G. Bishop Armash Hagop Nalbandyan	Primate of the Diocese of Damascus
17	Dr Karen Nazaryan	Head of Round Table Foundation
18	Mr Stanley J. Noffsinger	General Secretary, Church of the Brethren - USA
19	Mr Michel Nseir	WCC Programme Executive Public Witness, Special Focus on the Middle East
20	H.G. Bishop Mkrtych Proshyan	Primate of Aragatsotn Department
21.	Rev. Eilert Rostrup	Chair of Church of Norway's Committee of International Affairs
22.	Fr Dmitri Safonov	Moscow Patriarchate Department for Inter-Religious Relations
23	Mr Levon Sargsyan	Ambassador-at-large of RA

24	H. E. Archbishop Sahan Sargsyan	Archbishop of Aleppo
25	H.G. Bishop Gevorg Saroyan	Dean of Gevorgian Theological University
26	H. E. Archbishop Marek Solczynski	Apostolic Nuncio Of Armenia
27	Rev. Dr Olav Fykse Tveit	General Secretary, World Council of Churches

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Գիտության վաստակավոր գործիչ
ՀՀ Պաշտպանության Նախարարության Դ.Կանայանի անվ. Ազգային
Ռազմավարական Հետազոտությունների ինստիտուտի պետի և
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրենի խորհրդական

ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ՄԻՐԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՅ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հայաստանը պատմական և աշխարհագրական առումով պատկանում է այն տարածքին, որը դարեր շարունակ կոչվել է Առաջավոր Ասիա, իսկ XIX դարի սկզբներից՝ Մերձավոր Արևելք: Հայերն այստեղ են ձևավորվել որպես ժողովուրդ: Դա նրանց բնօրրանն է, այստեղ են կազմավորվել նրանց բոլոր պետությունները, այդ թվում և Արքայից արքա Տիգրան Մեծի հիմնած Հայկական կայսրությունը, իսկ Տիգրան Մեծին իմն աշխարհի քերես ամնահայտնի հռետոր, Հոմի սենատոր Յիցերոնը հռչակել է «Մեյլիք Ասիյա ալ-ազիմ»՝ «Ասիայի ամենամեծ արքա¹»: Հայաստանն առաջին երկիրն է աշխարհում, որ 301թ. քրիստոնությունը պաշտոնապես հռչակել է պետական կրոն, իսկ դա նշանակում է, որ շնորհիվ հայերի է, որ հենց Մերձավոր Արևելքում է հայտնվել առաջին քրիստոնյա պետությունը: Այս տարածքում է ձևավորվել աշխարհի ամենահին և ինքնատիպ քաղաքակրթություններից մեկը՝ Հայկական քաղաքակրթությունը:

Դեռ վաղնջական ժամանակներից հարևան առաջավորասիական կամ մերձավորարևելյան երկներում են կազմավորվել նաև առաջին հայ հա-

¹ Marwan al-Mudawar. Armenians Throughout of History, Beirut, 1982, p. 149 (in Arabic)

մայրքները և ոչ միայն հայ, այլև հրեական, ասորական, հունական, վրացական, անգամ հին հնդկական, ինչպես գիսանիների, և այլ համայնքները: Ամենայն հավանականությամբ հայկական առաջին համայնքներից մեկը կազմավորվել է Երուսաղեմում: Դրա վերաբերյալ վերին աստիճանի կարևոր, եզակի տեղեկություններ է հաղորդում Վիկտոր Ազարիան՝ «Երուսաղեմի հայկական քաղամասը: Քաղաքային կյանքը Վանքի պատերից ներս» իր արժեքավոր ուսումնասիրության մեջ²: Նա նշում է որ հայերն ունեցել են իրենց առանձին հատուկ քաղամասը Հին քաղաքում՝ Հայկական քաղամասը, որը Երուսաղեմի չորս քաղամասերից մեկն էր: Մյուս երեքը Քրիստոնեական, Մուսուլմանական և Հրեական քաղամասներն էին: Այստեղ, նշում է Ազարիան, Հայ եկեղեցու տնօրինության տակ են եղել և մինչև օրս շարունակում են մնալ Երուսաղեմի մի շարք ամենակարևոր սրբավայրերը, ինչպես Սուրբ Հակոբի վանքը, Անայի և Կայաֆայի տները³: Հայ եկեղեցին կարողիկ և հունական ուղղափառ եկեղեցիների հետ միասին վերահսկում է Տիրոջ սուրբ գերագմանը, Սուրբ Մարիամի գերեզմանը Գեթսեմանում, Բեթղեհեմի եկեղեցին⁴ և այլն:

Արաբների կողմից Երուսաղեմը գրավելուց հետո, Հայ եկեղեցու դիրքերը մնացին անասասն: Այդ կապակցությամբ Վիկտոր Ազարիան հետյալ կարևոր տեղեկությունն է հաղորդում: Հայ եկեղեցու ղեկավարը, կանխատեսելով արաբների մոտակա ներխուժումը Երուսաղեմ, մեկնում է Մեքքա և իսլամի հիմնադիր Մուհամմադ մարգարեից ստանում հրովարտակ, որը երաշխավորում էր Երուսաղեմում բնակվող հայերի կյանքի և գույքի ապահովությունը: Իսլամի հիմնադիրը ճանաչում է Հայ քրիստոնեյա եկեղեցու իրավունքները Երուսաղեմի բոլոր այն սրբատեղերի վրա, ո-

² Stk. V. Azariya, The Armenian Quarter of Jerusalem. Urban Life Behind Monastery Walls, London, 1984.

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

րոնք գտնվում էին նրա վերահսկողության տակ⁵: Եվ երբ խալիֆա Օմարը 638թ. գրավում է Երուսաղեմը, ապա նա իր նոր հրովարտակ-ֆետվայով հաստատում է այն բոլոր երաշխիքները, որ Մուսամմադ մարգարեն տվել էր Հայ եկեղեցուն: Հայերը Երուսաղեմում և նրա շրջակայքում կառացում են բազմաթիվ եկեղեցիներ և վանքեր: Հայ եկեղեցու հոգևոր առաջնորդներից Անաստասը , որն այցելել է Երուսաղեմ VI դարի կեսերին, նշում է, որ այնտեղ եղել է յոթանասուն հայկական եկեղեցի: Հետագայում Հայ եկեղեցու այդ իրավունքներն է ճանաչում և հարգում Այյուբյան դինաստիան և նրա հիմնադիր, Եգիպտոսի, Սիրիայի և Միջագետքի տիրակալ Սալահ ալ-Դինը (1171-1193թթ.)⁶, որի նախնիները Հայաստանի քրդերից էին, որոնք հետագայում հաստատվել էին արաբական երկրներում⁷: Հետագա դարերում ձևավորվում են հայերի և տարածաշրջանի մյուս ժողովուրդների նոր համայնքներ:

Սակայն արդի Հայ սփյուռքը ձևավորվել է 1915թ. Օսմանյան կայսրությունում երիտթուրքական ջարդարարների իրագործած հայերի ցեղասպանության արդյունքում, որը պատմության մեջ մտել է որպես XX դարի առաջին ցեղասպանություն: Խոսքը Արևմտյան Հայաստանի մասին է, որն Օսմանյան կայսրության կազմում հայտնվել էր 1639թ. Պարսկաստանի և Թուրքիայի միջև կնքված Կասր-ի-Շիրիմի պայմանագրով:

Դա շատ մեծ հարց է, ուստի մենք հակիրճ կանգ կառնենք միայն հետևյալ երեք հիմնախնդիրների լուսաբանության վրա, ներկայացնելով մեր կարծիքը: Առաջին՝ ցեղասպանության հետևանքով Մերձավոր Արևելքում և Սիրիայում հայ համայնքների առաջացումը, երկրորդ՝ նրանց

⁵ Նույն տեղում.

⁶ Նույն տեղում :

⁷ Ն.Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն (VIIդ.- 1516թ), Հ. I, Արաբները VII դարից մինչև 1516թ.: Երևան, 2003, էջ 328-330:

գարգացման հիմնական երեք փուլերն ու նրանց բնութագիրը, և , երրորդ՝ նրանց գոյության հեռանկարները:

Երիտթուրքերի ոճրագործ ղեկավարության կողմից ծրագրավորված Հայոց ցեղասպանությունը իրականացվեց երկաստիճան մակարդակով: Առաջին, հայերի զանգվածային սպանություն նրանց իսկ բնօրրանում՝ Արևմտյան Հայաստանում, Էրզրումի, Սվասի, Խարբերդի, Բիթլիսի, Վանի և Դիարբեքերի վիլայեթներում, և օսմանյան կայսրության բոլոր այլ հայաբնակ վայրերում: Երկրորդ, նրանց մնացած մասի ոչնչացումն արաբական անապատներում, Սիրիայի ու Իրաքի տարածքներում, որոնցով անցնելու էին հայ բռնագաղթվածների քարավանները: Երիտթուրքական ղեկավարությունը հավատացած էր, որ ի դեմս մուսուլման արաբների նա կգտնի իր արյունոտ գործի շարունակողների: Բայց այդ հարցում նա չարաչար սխալվեց: Երբ հայ գաղթականների քարավանները հայտնվեցին Սիրիայի, Իրաքի և արաբական մյուս երկրների տարածքներում, կատարվեց անսպասելի: Արաբ ազգաբնակչությունը, որն աստում էր օսմանյան տիրապետությունը և պատրաստվում էր ապստամբվել թուրքական լծի դեմ, ոչ միայն չմիացավ թուրքական արյունաբքու ոհմակին, այլև վտանգի ենթարկելով իրեն, օգնության ձեռք մեկնեց հայ տարագիրներին, նրանց առջև բացեց իր սրտի և տան դռները: Դրա շնորհիվ հարյուր հազարավոր հայ գաղթականներ փրկվեցին մահվան անխուսափելի ճիրաններից: Դա համաշխարհային պատմության մեջ ասպետական մարդասիրության ամենափայլուն դրսևորումները մեկն է: Հենց այս հանգամանքը հետագայում վճռորոշ դեր խաղաց Սիրիայում և արաբական մյուս երկրներում՝ Իրաքում, Լիբանանում, Հորդանանում, Պաղեստինում ու Եգիպտոսում հայերի հաստատման ու մերօրյա հայ սփյուռքի առաջացման համար:

Այս կապակցությամբ հարկ ենք համարում կանգառնել արաբների մարդասիրության մի ասպեկտի վրա ևս, կապված նրանց մուսուլման լինելու հանգամանքի և իսլամ-քրիստոյա փոխառնչությունների հետ, որը քավարար չափով չի լուսաբանված հետազոտողների կողմից:

Իրականացնելով քրիստոնյա հայերի, ինչպես նաև Պոնտոսի հույների և Հաբյարիի ու այլ վայրերի ասորիների ցեղասպանությունը, մուսուլման բուրքերը կոպտորեն խախտեցին և ոտնահարեցին իսլամի մի այնպիսի հիմնարար սկզբունք, ինչպես զիմմիի հիմնադրույթը: Դա արաբերեն տեքմին է, որը բառացի նշանակում է «ենթահովանավորյալ ժողովուրդներ», որոնք գտնվում են իսլամի և իսլամ դավանող մուսուլմանների հովանավորության կամ խնամակալության տակ: Իսլամի այդ հիմնարար դրույթը տարածվում էր ոչ մուսուլման, այլ կրոններ դավանող այն ժողովուրդների վրա, որոնք ունեին իրենց սրբազան գիրքը և կոչվում էին՝ «Աիլալ-քիթաբի»՝ «Գրքի ժողովուրդ»: Դրանց թվին էին պատկանում քրիստոնյաները՝ հայերը, հույները, ասորիները և քաղղեսականները, որոնք ունեին իրենց սրբազան գիրքը՝ Բիբլիան-Աստվածաշունչը, հրեաները, որոնց սրբազան գիրքը Թորան էր, զրադաշտականները, որոնց սրբազան գիրքը Ավեստան էր: Համաձայն զիմմիի հիմնադրույթների՝ վերոհիշյալ կրոնները դավանող ոչ մուսուլման ժողովուրդներին բույստրվում էր ապրել իսլամական երկրներում, դավանել իրենց կրոնը, երաշխավորվում էր նրանց կյանքի ապահովությունը, գույքի անձեռնմխելիությունը, պահպանվում էին նրանց սրբավայրերը, եկեղեցիները, սինագոգներն ունենալու և կրոնական ծիսակատարություններ կատարելու իրավունքը: Արգելվում էր «Գրքի ժողովուրդների» բռնի իսլամացումը: «Գրքի ժողովուրդները» ենթակա էին իրենց համապատասխան հոգևոր առաջնորդների՝ պատրիարքների և կաթողիկոսների իրավասությանը: Այդ բոլորի դիմաց «Գրքի ժողովուրդները» պետք է վճարեին հատուկ գլխահարկ՝ ջիզիա⁸:

Ահա իսլամական այս հիմնադրույթն էր, որ մշտապես ոտնահարվել է Օսմանյան կայսրությունում, իսկ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում դրսևորվել զանգվածային ջարդերի՝ ցեղասպանության, բռնագաղթերի ձևով:

⁸ Институт востоковедения АН СССР, Ислам . Краткий справочник, Москва, 1983, с. 37;

Երիտթուրքերի այդ ոճրագործությունը, որը վարկաբեկում էր իսլամը, խստորեն դատապարտեց իսլամական աշխարհի մի այնպիսի անառարկելի հեղինակություն, որպիսին Մեքքայի շեյխի և Հիջազի կառավարիչ Չուսեյն իբն Ալի ալ-Հաշիմին էր, որը սերում էր Իսլամի հիմնադիր Մուհամմադ մարգարեի նույն Կուրեյշ ցեղի Հաշիմի տոհմից: Նրա բարձր հեղինակությունը համայն իսլամական աշխարհում պայմանավորված էր երկու հանգամանքով: Առաջին, նա, ինչպես նշվեց, ուղղակի սերում էր Իսլամի հիմնադիր Մուհամմադ մարգարեի տոհմից: Երկրորդ, իսլամական աշխարհի երկու ամենակարևոր սրբազան կենտրոնները՝ Մեքքան և Մեդինան, գտնվում էին նրա հովանավորության ներքո, ինչն առանցնահատուկ կշիռ էր տալիս նրան:

Չուսեյն իբն Ալի ալ-Հաշիմին, չորս որդիների՝ Ալիի, Աբդալահի, Ֆեյսալի և Ջեյդի հետ միասին 1916թ. գլխավորեց արաբների մեծ ապստամբությունն օսմանյան տիրապետության դեմ և կարևոր դեր խաղաց Օսմանյան կայսրության կործանման և օսմանյան տիրապետությունից արաբների ազատագրում գործում⁹:

Նա 1916-1917թթ. իսլամական աշխարհի առաջնորդներին հղած իր երկու ուղերձներում խստորեն քննադատել է Երիտթուրքական կուսակցության և Օսմանյան կայսրության ղեկավարներ Էնվերին, Թալեաթին և Ջեմալին, որոնք, ինչպես հավատացած էր Մեքքայի շեյխի՛նը, սխալ քաղաքականություն էին վարում¹⁰: Նա դատապարտում է ա-

⁹ Stou` N.Hovhannisyán, Arab Historiography on the Armenian Genocide, Yerevan, 2005, p.138.

¹⁰ "Manshur ham min sharif Mekka wa amiruha ila jamihi ikhvanihi al-muslimin. 1916 huzeiran 26-"Masadir al-Arabiya hawla jarima ibadati al-Arman"(A Common Appeal of the Sheriff of Mecca and its Governor to all Muslim Brothers , July 26, 1916. Arabic Sources About the Armenian Genocide)", Beirut, 1988, p 11-19 (in Arabic).

րաբների և կայսրության մյուս ոչ թուրք բնակչության, այդ թվում և հայերի նկատմամբ նրանց քաղաքականությունը: Այդ կապակցությամբ նա մատնանշում է երեք հանգամանք. ա/ արաբներին և կայսրության բոլոր ժողովուրդներին թուրքացնելու երիտթուրքերի փորձերը. բ/ թշնամական դիրքորոշումը արաբների և արաբերենի նկատմամբ, որը մուսուլմանների սրբազան գրքի՝ Կորանի լեզուն է, և, գ/ հայերի գանգվածային սպանող Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ:

Ըստ Հուսեյն իբն Ալի ալ-Հաշիմիի, երիտթուրքերի քաղաքականությունը հակասում էր իսլամի սկզբունքներին և նրանք «խզել են կապերը իսլամական աշխարհի, սրբազան Կորանի և սուննայի հետ»¹¹: Նա, նկատի ունենալով երիտթուրքերի թշնամական դիրքորոշումը արաբների, արաբական լեզվի նկատմամբ, և արաբական ազգային առաջնորդներին Դամասկոսում, Բեյրութում, Ալեյում, Երուսաղեմում 1915-1916թթ. երիտթուրքերի ղեկավար Ջեմալ փաշայի հրամանով կախաղան հանելը, իր երկու նամակներում, հասցեագրված համայն իսլամական աշխարհի ամենաերևելի ղեկավարներին և իսլամագետներին, գրում է. «Երիտթուրքերի քաղաքականությունը ընդհանուր ոչինչ չունի Իսլամի և իսլամական առաքինությունների հետ»¹²: Ահա նաև այս պատճառով է Օսմանյան պետությունը համարվում ցեղասպան պետություն:

Հուսեյն իբն Ալին նման եզրակացության հանգեց նաև Հայկական հարցում երիտթուրքերի կիրառած քաղաքականության հետևանքով: Իմանալով հայոց ցեղասպանության մասին, նա 1916թ. հատուկ նամակ է

¹¹ Նույն տեղում:

¹² Նույն տեղում՝

գրում սիրիական ռազմաճակատում արաբական ապստամբ բանակի հրամանատարներին՝ իր որդուն՝ Էմիր Ֆեյսալին, և Էմիր Աբդ ալ Ազիզ ալ Ջաբրային, և կարգադրում նրանց ամեն տեսակի օգնություն ցույց տալ հայ գաղթականներին և «պաշտպանել նրանց այնպես , ինչպես դուք պաշտպանում եք ձեր անձը, ձեր երեխաներին և ձեր ունեցվածքը, որովհետև նրանք մուսուլմանների զիմմիներն են»¹³:

Զիմմիի հիմնադրույթը մշտապես շարունակվել է ոտնահարվել մակ հետոսմանյան, մերօրյա Թուրքիայում, որի վկայություններն են վերջերս հայ ականավոր հասարակական գործիչ Հրանտ Դինքի, թուրքական բանակի հայ սպայի սպանությունը, հույն ուղղափառ բարձր աստիճան հոգևորականների ողջակիզումը և կաթոլիկ հոգևորականների հետապնդումը և այդ բնույթի այլ ոճիրներ:

Այս հիմքի վրա արաբական պատմագիտության մեջ այն տեսակետն է հաստատվել, որ արաբական իսլամը տարբերվում է թուրքական իսլամից: Արաբական իսլամը հավատարիմ է իսլամի առանցքային հիմնադրույթներին, հանդուժողական է այլ կրոն դավանողների նկատմամբ, կանգնած է զիմմիների իրավունքները պաշտպանելու դիրքերում, մինչդեռ «թուրքական իսլամին» բնորոշ է ամհանդուժողականությունն ու բռնությունը: Այդ հարցին անդրադարձել են արաբ այնպիսի հեղինակներ, ինչպես Սալեհ Չահր ալ Դինը (Լիբանան), Աբեբտ Հաուրանին (Սիրիա) , Ֆուադ Հասան Հաֆիզը (Եգիպտոս) և շատ ուրիշներ:

Արաբների մարդասիրական վերաբերմունքի շնորհիվ Մերձավոր Արևելքում ձևավորվեցին հայ համայնքներ ու սկիզբ դրվեց հայ նոր սփյուռքին:

Հայկական նոր սփյուռքն իր զարգացման ընթացքում անցել է երեք փուլ:

¹³Ն.Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն(VIIդ.-2005թ.), Հ.II, Օսմանյան տիրապետության շրջան, 1516-1918, Երևան, 2004, էջ 565:



Առաջին փուլն ընդգրկում է 1920-1945 թվականները, որը մենք անվանում ենք «Հայ սփյուռքի կազմավորման փուլ» : Հայերը, օգտվելով արաբ ժողովրդի և իշխանությունների բարյացակամ վերաբերմունքից, ստեղծեցին իրենց ազգային ներհամայնքային կառույցները և գաղթականի կարգավիճակից դարձան արաբական երկրների քաղաքացիներ, իսկ արաբական երկրները՝ նրանց երկրորդ հայրենիքը: Հայերի պահվածքը և գործունեությունը շատ բարձր են գնահատել արաբ պետական գործիչները: 1943թ. անկախություն նվաճած Սիրիայի առաջին պրեզիդենտ Շուքրի Բուարֆին, բարձր գնահատելով հայ համայնքների ներդրումը Սիրիայի և Լիբանանի անկախության համար մղված պայքարում, հայտարարեց. «Մեր հարգանքը և վստահությունը հայերի հանդեպ համոզմունքի ուժ ունի: Հայերը Սիրիայում կօգտվեն այն նույն իրավունքներից, որ օգտվում են Սիրիայի արաբները: Իսկ եթե մի օր որևէ մեկն ուզենա ոտնահարել հայերի իրավունքները Սիրիայի և Լիբանանի մեջ, ես այդ բանին արգելք պիտի լինեմ՝ ի հարկին արյանս գնով»¹⁴: Շատ բարձր է գնահատել հայերի դիրքորոշումը Լիբանանի ազգային-ազատագրական շարժումներին հանուն Լիբանանի անկախության, նաև Լիբանանի բարձրագույն ղեկավարությունը: Անկախ Լիբանանի առաջին պրեզիդենտ Բիշարա ալ-Խուրին Լիբանանի հայ համայնքի ղեկավարության հետ 1943 թ. ղեկտեմբերին կայացած հանդիպման ժամանակ, հայտարարել է. «Հայերը հավատարիմ են և նվիրված Լիբանանին, նրա ժողովրդին և սահմանադրությանը: Լիբանանի հայ համայնքը Լիբանանի ժողովրդի անբաժան մասն է»¹⁵:

Երկրորդ փուլը «Հայ համայնքների ամրապնդման և արաբական երկրների պետական, հասարակական-քաղաքական և տնտեսական

¹⁴ «Ժողովուրդի Ձայն», Բեյրութ, 11 դեկտեմբերի 1943թ.

¹⁵ Տե՛ս Ն. Հովհաննիսյան. Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում (1939-1958), Երևան, 1967, էջ 135:

կյանքում նրանց դերի բարձրացման փուլն է», որն ընդգրում մոտ քառորդ դար՝ 1946 թվականի սկզբներից- մինչև-1970 թվականների սկիզբները : Այս փուլում աճում է հայերի թվաքանակը Մերձավոր և Միջին Արևելքում, ներառյալ Իրանը, հասնելով մոտ 800 հազարի: Հայերը դառնում են պառլամենտի անդամ, նախարարներ, պետական ապարատի պաշտոնյաներ, քանակի գորահրամանատարներ, մաս կազմելով արաբական երկրների իստաբլիշմենտի: Իսկ Միրիան և Լիբանանը դառնում են Հայ Սփյուռքի կենտրոն:

Երրորդ փուլը մենք անվանում ենք «Մերձավոր Արևելքի հայ համայնքների աստիճանական թուլացման և նրանց վերացման փորձերի փուլ », որը սկսվեց 1970-ականների սկզբներին և շարունակվում է մինչև օրս: Դա արդյունք էր առաջին հերթին արտաքին միջամտության, քեև հաշվից չի կարելի դուրս նետել նաև ներքին որոշ հանգամանքներ: Արտաքին գործոնների մեջ առանձնանում է եռյակի՝ ԱՄՆ-ի, Իսրայելի և Թուրքիայի բացասական դիրքորոշումն արաբական այն երկրների հանդեպ, որոնք քարեկամական հարաբերություններ ունեին Խորհրդային Միության հետ: Այդ եռյակից յուրաքանչյուրն ուներ իր մոտիվացիան: Հիշենք, որ դա սառը պատերազմի շրջանն էր: Այդ պատերազմում ԱՄՆ-ը ԽՍՀՄ-ը համարում էր գլխավոր թշնամին և ձգտում էր բոլոր միջոցներով թուլացնել ԽՍՀՄ-ի դիրքերը արաբական երկրներում, որոնցից մի քանիսի հետ, ինչպես Միրիան, Եգիպտոսը, Իրաքը, Եմենը, նա ուներ կնքված բարեկամության ու համագործակցության համաձայնագրեր: ԱՄՆ-ը այդ երկրների հայկական համայնքները դիտում էր որպես լրացուցիչ հենարաններ Խորհրդային Միության ազդեցության ուժեղացման և պահպանման համար, ուստի և նրա բացասական դիրքորոշումը տարածվում էր նաև տեղի հայ համայնքների վրա: Սակայն հարկ ենք համարում ընգծել, որ Հայ համայնքների համակրանքը ոչ քե Խորհրդային Միության կողմն էր, այլ նրա կազմում գտնվող Խորհրդային Հայաստանի կողմը: Այս նրբությունը յանկիները չէին նկատում կամ չէին ուզում նկատել: Ուստի հարվածելով ԽՍՀՄ-ին բարեկամ արաբական երկր-

ներին, նրանք հարվածն ուղղում էին մաս առ առ երկրների հայ համայնքների դեմ, որը ոչնչով արդարացված չէր: Այդ միտումներն ավելի ցայտուն դրսևորվեցին լիբանանում 1975-1989 թվականների քաղաքացիական պատերազմի ժամանակ, որը քառսի վերածեց այդ երբեմնի ծաղկուն երկիրը: Ահռելի չափեր ընդունեց Լիբանանից արտագաղթը, որն արաբների հետ միասին իր մեջ առավ մաս լիբանանահայությանը: Արտագաղթն ավելի մեծ ծավալներ ընդունեց, երբ իսրայելական զորքերը 1982թ. ներխուժեցին Լիբանան, գրավեցին Բեյրութը և այլ քաղաքներ ու գյուղեր: Իսկ ԱՄՆ-ը արտագաղթը հեշտացնելու և արաբների ու հայերի արատագաղթը խթանելու նպատակով նրանց համար հեշտացրեց մուտքի վիզայի տրամադրումը: Լիբանանից արտագաղթեց մոտ 200 հազար հայ և Լիբանանում մնաց մոտ 35-40 հազար հայ: Լիբանանը դադարեց լինել սփյուռքահայության կենտրոն, որը բուլացրեց մաս սիրիահայ համայնքը:

Իսրայելի մոտիվացիան պատճառաբանած է այն հանգամանքով, որ արաբա-իսրայելական ամբողջ հակամարտության շրջանում, արաբա-իսրայելական բոլոր հինգ պատերազմների ժամանա, Խորհրդային Միությունը պաշտպանում էր արաբներին, իսկ 1967թ. հունիսյան պատերազմի ժամանակ խզեց դիվանագիտական հարաբերությունները Իսրայելի հետ: Այդ պատճառով Իսրայելը ԽՍՀՄ-ին դիտում էր որպես բշնամի երկիր և հարվածը լիբանանահայությանը մա դիտում էր մաս հարված ԽՍՀՄ-ին և նրա դիրքերի բուլացում արաբական աշխարհում: Այնպես, որ, Իսրայելը մույնպես իր ներդրումն ունեցավ Լիբանանի և արաբական մյուս երկրների հայաթափության գործընթացում:

Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա մա եռյակի թերևս ամենաշահագրգիված պետությունն էր արաբական երկրներից հայերի արտաքսմանը և հայ համայնքների վերացմանը: Նա իր համար մեծ սպառնալիք էր համարում այն հանգամանքը, որ իր անմիջական սահմանների մոտ՝ Սիրիայում, Լիբանանում, Իրաքում, Հորդանանում Պաղեստինում հաստատվել էին հայերը, որոնք հայոց ցեղասանության գոհերի անմիջական գա-

վակներն էին, որոնց երկիրը նրանք գրավել էին, որոնք ոչինչ չէին մոռացել, հիշում էին ցեղասպանության արհավիրքները և օրինական պահանջատեր էին: Նրանք պահանջում էին Թուրքիայից ոչ միայն ճանաչել հայոց ցեղասպանությունը, այլև հետ վերադարձնել իրենց երկիրը՝ Արևմտյան Հայաստանը: Ուստի Թուրքիան գտնում էր, որ հայերը ինչքան հեռու գտնվեն Թուրքիայի սահմաններից, այնքան ավելի լավ: Մյուս կողմից, Թուրքիան լինելով ՆԱՏՕ-ի անդամ, որին հանձնարարվել էր ապահովել Խորհրդային Միության դեմ ուղղված արևելյան թևը, ինքը նույնպես շահագրաված էր, ինչպես ԱՄՆ-ը և Իսրայելը, Խորհրդային Միության բուլացմամբ, ինչը լրացուցիչ հանգամանք էր հարևան արաբական երկրների հայկական համայնքների վերացման ուղղությամբ:

Երկրորդ հարվածը հայկական և քրիստոնյա մյուս բոլոր համայնքները ստացան Իրաքում, երբ 2003թ. ԱՄՆ-ի պրեզիդենտ Ջորջ Բուշ կրտսերը ներխուժեց Իրաք: Քաղաքական առումով Իրաքը գլորվեց անդունդը, որտեղից մինչև օրս չի կարողանում դուրս գալ: Ահաբեկչությունը դարձել է իրաքյան կյանքի առօրյա երևույթը, սուննիները և շիաները սպանում և մորթում են միմյանց: Այդ սարսափելի մթնոլորտը շատ ծանր նստեց Իրաքի հայերի և մյուս բոլոր քրիստոնյա համայնքների վրա, որոնք մեծապես տուժում են ահաբեկչությունից, սպանություններից, սպառնալիքներից, նրանց դեմ կիրառվող զանազան բռնություններից: Հայ և քրիստոնյա մյուս համայնքները կազմալուծվեցին: Նրանք հարկադրված լքում են Իրաքը և ապաստան փնտրում այլ երկրներում: Քրիստոնյաների թվաքանակը այսօր խիստ կրճատվել է Իրաքում և նրանք կորցրել են իրենց երբեմնի կարևոր դերակատարումը: Դա մեծ կորուստ է համայն քրիստոնեական աշխարհի համար: Հարկ է նշել, որ մինչ այդ, հանրապետական Իրաքի ղեկավարները բարենպաստ դիրքորոշում են ունեցել քրիստոնյաների, այդ թվում և հայերի նկատմամբ: Ես հանդիպում և զրույց եմ ունեցել Ահմադ Հասան ալ Բաքրի հետ, որն Իրաքի պրեզիդենտն էր 1971-1979թվականներին: Մեր զրույցի ժամանակ նա նշեց, որ «Իրենք շատ զոհ են իրաքահայերից, նրանք շատ ազնիվ, վստահելի մարդիկ են և Իրաքի օ-

րինական քաղաքացիները, և ինքն իր հնարավորության տակ եղած բոլոր միջոցներով կպաշտպանի հայերին և բույլ չի տա, որ նրանց իրավունքները ոտնահարվեն»:

Այժմ անդրադառնանք Սիրիայի հայ համայնքին՝ Սիրիայի պատմության համատեքստում: Սիրիան մշտապես կարևոր դերակատարում և նշանակություն է ունեցել Թուրքիայի համար և բացառիկ դերակատարում արաբական աշխարհում: Մի առիթով համասարաբական լիդեր Գամալ Աբդել Նասերն ասել է, որ «Եթե Եգիպտոսը արաբական աշխարհի գլուխն է, ապա Սիրիան նրա բաբախում սիրտը»: Առաջին համաշխարհային պատերազմում պարտություն կրած Թուրքիան երբեք չի հաշտվել արաբական երկրների, առաջին հերթին Սիրիայի կորստյան հետ: Դրա մասին են վկայում հետևյալ փաստերը, որոնք կօգնեն հասկանալ Թուրքիայի արդի քաղաքականությունը Սիրիայի, ինչպես նաև արաբական մյուս երկրների հանդեպ:

1919թ. հոկտեմբերին Մուսթաֆա Էեմալը կոչով դիմեց սիրիացիներին միավորվել Թուրքիայի հետ և միասնական ուժերով պայքարել եվրոպական պետությունների դեմ, ընդձեռնելով «Մենք ցանկանում ենք, հակառակ Վիլսոնի սկզբունքների, միացնել այն մասերը, որոնք պատկանում են Թուրքիային»¹⁶: Էեմալը ձգտում էր վերականգնել թուրքական տիրապետությունը Սիրիայի վրա, սակայն սիրիացիներ չխաբվեցին և մերժեցին Էեմալի առաջարկությունները:

Բայց Թուրքիային 1937-1939թթ. հաջողվեց Ֆրանսիայի համաձայնությանը և Անգլիայի աջակցությանը անդամահատել Սիրիան և Ալեքսանդրետի սանջակը 1939թ. կցել իրեն¹⁷: Դա մեծ ողբերգություն էր Սանջակի հիմնական քնակիչների՝ արաբների և հայերի համար: Հայերը, չցանկանալով կրկին հայտնվել թուրքական տիրապետության ներքո, լքե-

¹⁶ "Documents on British Foreign Policy. 1919-1939", First Series, Vol.IV, London, p.568.

¹⁷ Ա. Բայրամյան, Ալեքսանդրետի Սանջակի հարցը և միջազգային դիվանագիտությունը (1936-1939) Երևան, 1988.

ցին Ալեքսանդրենտի սանջակը: Նույն կերպ վարվեցին նաև արաբները: Արտագաղթեց 70 հազար հայ և արաբ:

Թուրքիան 1941թ. հունիսին, օգտվելով պատերազմի ստեղծած իրադրությունից, դիմեց հիտլերյան Գերմանիայի ղեկավարությանը համաձայնվել, որ Թուրքիան իր վերահսկողությունը հաստատի Բալկան-Բաղդադ-Բասրա երկաթուղագծի վրա, գրավի ամբողջ Սիրիան ու Իրաքի Մոսուլի նահանգը՝ իբրև թե կանխելու անգլիական հնարավոր ագրեսիան: Թուրքիան հավաստիացնում էր Գերմանիային, որ պատերազմից հետո դրանք կվերադարձնի Ֆրանսիային, քացառությամբ Հալեբի նահանգի¹⁸: Նշենք, որ Հալեբը սիրիահայության կենտրոնն էր, իսկ Մոսուլը իրաքահայության կենտրոններից մեկը: Հասկանալի է, թե ինչպիսի վտանգ կարող էր ներկայացնել սիրիահայության և իրաքահայության գոյությանը, եթե այդ շրջաններն անցնեին Թուրքիայի վերահսկողության տակ: Դա Օսմանյան ժառանգորդների կողմից Հայոց ցեղասպանության նոր էջ կբացեր:

Գերմանիան մերժեց թուրքական այդ ծիծաղելի պահանջները: Գեմաևնիայի արտաքին գործերի նախարար Ռիբենտրոպը 1941թ. հուլիսի 12-ին հեռագիր է ուղարկում Անկարայում Գերմանիայի դեսպան Պապենին, հայտնելով նրան, որ «Մեզ համար անհնար է որևէ բարենպաստ դիրքորոշում ընդունել Հյուսիսային Սիրիան գրավելու թուրքական պահանջի վերաբերյալ»¹⁹:

Թուրքիան հետագայում ևս չի հրաժարվում Սիրիան ինչ-որ ձևով իրեն կցելու կամ ենթարկելու մտքից, սակայն դա նրան չի հաջողվում:

Իրադրությունը Սիրիայի շուրջը կրկին լարվեց և սպառնալից չափեր ընդունեց, երբ 1970թ. իշխանությունն անցավ Հաֆիզ Ասադին: Դա ընկալվեց որպես իշխանության անցումն արավիական կլանին, որի դեմ համդես եկավ

¹⁸ "Documents of German Foreign Policy.1918-1945. Series D (1937-1945)", London, 1954, vol. III, p.82.

¹⁹ Ibid, p. 123.

ուչ միայն Սիրիայի մեծամասնությունը կազմող սուննի համայնքը, այլև հարևան երկրները, որտեղ իշխանությունը պատկանում էր սուննիներին. այդ բվում արաբական երկրները՝ Սաուդյան Արաբիայի գլխավորությամբ, ինչպես նաև Թուրքիան, որոնք արիամարիական վերաբերմունք ունեն ալավիների նկատմամբ և նրանց նույնիսկ մուսսուլմաններ չեն համարում: Հաֆիզ Ասադը և նրան հաջորդած իր որդին՝ Բաշար Ասադը, հաջողությամբ կարողանում էին դիմակայել իրենց հակառակորդներին և դրանում իր դրական դերը խաղաց նրանց ճիշտ քաղաքականությունը Սիրիայի ազգային և կրոնական փոքրամասնությունների, այդ բվում և հայերի նկատմամբ, ուրոնք հանդես էին գալիս սիրիական վարչակարգի պաշտպանությամբ: Ես հանդիպել եմ քե՛ս՝ պրեզիդենտ Հաֆիզ Ասադի և քե՛ս՝ Բաշիր Ասադի հետ և մեր գրույցի ընթացքում քննարկվել է նրանց քաղաքականությունը հայերի և մյուս փոքրամասնությունների նկատմամբ: Նրանք շատ քարծր էին գնահատում հայերի դերակատարումը Սիրիայի ներքաղաքական կյանքում, մասնավորապես կայունություն հաստատելու գործում: Նրանց իրավունքների պաշտպանությունն ու հարգումը հայր և որդի Ասադների համար համոզմունքի ուժ ուներ:

Հակասիրիական ուժերը, օգտվելով 2011թ. արաբական աշխարհը համակած քաղաքական ըմբոստությունից, որի նպատակն էր արաբական հասարակության, նրա քաղաքական, տնտեսական, սոցիալական և վարչական կառույցների արդիականացումը, 2011թ. մարտին պատերազմական գործողություններ սկսեցին Սիրիայի դեմ, որն արդեն շարունակվում է ավելի քան չորս տարի: Ընդդեմ վարչակարգի հանդես եկան սիրիական սուննիները և սուննիզմի արմատական՝ սալաֆիական բլը: Միաժամանակ ձևավորվեց հակասիրիական միջազգային մի կծիկ, որի բաղկացուցիչ մասն են կազմում ԱՄՆ-ը, Կանադան, Եվրամիությունը և նրա գլխավոր երկրները՝ Գերմանիան, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, արաբական մի շարք երկրներ՝ Սաուդյան Արաբիան, Կատարը , և իհարկե, Թուրքիան ու Իսրայելը: Նրանց գլխավոր նպատակը Բաշար Ասադի և նրա վարչակար-

գի տասպալումն է: Պատերազմական գործողություններին ընդդեմ սիրիական վարչակարգի մասնակցում են իսլամական զանազան կազմակերպություններ՝ ալ-Կախիդան, Իխվան ալ-մուսլիմինը՝ Մուսուլման եղբայրները, զանազան իսլամական ճակատներ, խմբավորումներ, բուրքական, աղբբեջանցի, դադստանցի, պակիստանցի, և այլ վարձկաններ ու թափփուկներ: Նրանց զինում, նյութական և ամեն տեսակի օգնություն են ցույց տալիս վերևում նշված երկրները, նրանց զինվորական հրահանգիչները: Նրանց նյարդայնացնում է այն հանգամանքը, որ Բաշար Ասադին պաշտպանում և քաղաքական ու ռազմական օգնություն է ցույց տալիս Ռուսաստանի Դաշնությունը, ինչպես նաև Իրանի Իսլամական Հանրապետությունը: Սիրիական իրադարձությունների մեջ խիստ բացասական դեր է կատարում Թուրքիան, որը հավակնություններ ունի դառնալ մերձավորարևելյան գերտերություն , հասնել իր նեոօսմանական նպատակների իրականացմանը: Այդ բոլոր ուժերը, որոնք պայքարում են սիրիական լեգիտիմ վարչակարգի դեմ, Սիրիա են ներխուժում և ռազմական գոծողություններ ծավալում Թուրքիայից, որի սահմանները բաց են նրանց առջև: Սիրիան հայտնվել է ծանր վիճակում, երկիրը ավերվում է, քաղաքներն ու գյուղական բնակավայրերը կործանվում, մարդկային զոհերի թիվն անցնում է երկուհարյուր հազարից, միլիոնավոր սիրիացիներ արտագաղթել են:

Այս թոհուրոհի մեջ Թուրքիան ձգտում է նաև լուծել իր գլխավոր խնդիրներից մեկը՝ վերացնել մեկընդմիջտ իր անմիջական հարևանությամբ գտնվող սիրիահայ համայնքը, որի կենտրոնը Հալեբն է: Թուրքիայից ուղղորդվող պատերազմական գործողությունները վերջին շրջանում կենտրոնացված են Հալեբի հայկական թաղամասերի վրա, քանդվում են հայերի տները, եկեղեցիները, դպրոցները, մշակութային կենտրոնները, գործատեղիները, հողին է հավասարվել Հալեբի հայկական Նոր գյուղ թաղամասը և այլ հայաբնակ շրջաններ: Նրանք հարկադրված հեռանում են երկրից: Արդեն արտագաղթել են մոտ 25 հազար հալեբահայեր, որոնցից մոտ 15 հազարը՝ Հայաստան: Իսկ 2014թ. մարտ ամսին հայաբափ եղավ

Քեսաբը: Փաստորեն Թուրքիան արդեն մոտ է իր գլխավոր խնդիրներից մեկի իրագործմանը՝ հայությանը լրիվ դուրս մղել Միդիայից, որտեղ ընդամենը մնացել է մոտ 35-40 հազար հայ:

Այսպիսով, եթե ամփոփելու լինենք, ապա պետք է ընդունենք, որ վերջին մի քանի տասնամյակներում Մերձավոր Արևելքում խիստ բուրացան հայ համայնքները: Նրանք այլևս նախկին հզոր և ազդեցիկ համայնքները չեն: Մերձավոր Արևելքն այլևս սփյուռքահայության կենտրոնը չէ: Իսկ ԱՄՆ-ում տեղակայված մոտ մեկ միլիոնանոց հայությունն այդ երկրի առանձնահատկությունների բերումով, չկարողացավ ու չի էլ կարող գրավել Միդիայի և Լիբանանի հայության տեղը և դառնալ հայկական սփյուռքի կենտրոն: Թուրացան նաև համայն քրիստոնեության դիրքերը այդ կարևոր տարածաշրջանում, որը քրիստոնեության հայրենիքն է, որտեղ ծագել, զարգացել և ամրապնդվել է քրիստոնեությունը որպես կրոն: Շատ տեղերում այլևս չեն դողանջում քրիստոնեական եկեղեցիների և տաճարների զանգերը: Ո՛չ զանգ տվող կա և ո՛չ էլ դրան սպասող կա: Հուսալ թե քրիստոնյաները կարող են վերականգնել իրենց նախկին դիրքերը, միասնություն կլիներ: Տարածաշրջանից հարկադրված հեռացած քրիստոնյա հայերը և մյուս քրիստոնյաները չենք կարծում թե կվերադառնան իրենց նախկին բնակատեղիները, դրանք արդեն զբաղված են ուրիշների կողմից՝ արմատական իսլամ դավանողների ու իսլամական ահաբեկչական կազմակերպությունների կողմից, որոնք այժմ ավելի մեծ հնարավորություններ ունեն արգելելու քրիստոնյաների վերադարձը տարածաշրջան: Մա պեսիմիզմ չէ, այլ իրողություն: Չմոռանանք, որ հայրենիքից կտրված և էրնիկական ու կրոնական այլ միջավայրում հայտնված համայնքները հարատևելու ապագա չունեն: Նրանց ապագան ուժացումն է: Դա է հաստատում համաշխարհային փորձը: Դա է հաստատում նաև Անիից, Վանից, Մուշից, Բիթլիսից, Մասունից , Էրզրումից և այլ բնօրրաններից հեռացած ու օտար ավերում հաստատված հարյուր, երեսուցյակ միլիոնավոր հայերի սլամական դառը փորձը:

Մեր այս համաժողովին ներկայացված գեկուցումներում և քննարկումների ժամանակ նշվեց, որ քրիստոնեության դրությունը Մերձավոր Արևելքում հուսահատական է: Մերձավոր Արևելքի քրիստոնեյաներն ի վիճակի չեն սեփական ուժերով լուծել իրենց գոյատևության հարատևության և անվտանգության խնդիրներն առանց դրսի օգնության: Նրանք հզոր տերությունների և միջազգային զանազան կազմակերպությունների, կոմիտեների, ասոցիացիաների, այդ թվում և Միավորված ազգերի կազմակերպության օգնության կարիքն ունեն: Կարծում ենք, որ տազնապը Մերձավոր Արևելքի քրիստոնեյաների գոյության հարցում, հիմնադուրկ չէ: Եվ պետք է ասեմ, որ քրիստոնեյաների անվտանգ գոյությունը Մերձավոր Արևելքում այսօր ոչ մի կերպ երաշխավորված չէ: Նրանց գոյության հեռանկարները խիստ մոայլ են և մշուշապատ: Ասորական ուղղափառ եկեղեցու արքեպիսկոպոս Դիոնիսոս Ժան Կավակ սրբազանն իր զգացմունքային ելույթում նշեց, որ 10 տարի անց Մերձավոր Արևելքում այլևս ոչ մի քրիստոնյա չի լինի: Լիովին կիսելով նրա տեսակետը, սակայն կարծում ենք, որ դա տեղի կունենա ոչ քն 10 տարի անց, այլ քերևս 20-25 տարի հետո, ինչն, ըստ էության, ոչինչ չի փոխում և չի կանխում սպասվող վտանգը:

Հեղինակի մասին.

Պատմական գիտությունների դոկտոր (1968) , պրոֆեսոր (1972) , Գիտության վաստակավոր գործիչ (2003), ՀՀ Գիտությունների ակադեմիայի քրեակից անդամ (2006): ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի հիմնադիրներից և ղեկավարներից է, նույն ինստիտուտի Արաբական երկրների բաժնի կազմակերպիչ և ղեկավար (1960-2002), հայկական արաբագիտական դպրոցի հիմնադիր: 1984-1994թթ եղել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրենի գիտական գծով տեղակալ , իսկ 1995-2006թթ.՝ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն: 2006 թվականից վերոնշյալ ինստիտուտի տնօրենի խորհրդական, Մերձավոր և Միջին Արևելքում միջազգային և տարածաշրջանային հարաբերությունների ուսումնասիրության բաժնի հիմնադիր-ղեկավար, ՀՀ Պաշտպանության նախարարության Դ.Կանաչյանի անվան Ազգային ոսպմավարական հետազոտությունների ինստիտուտի պետի խորհրդական:

Տասնամյակներ շարունակ նրա ուսումնասիրությունների կենտրոնում են եղել այնպիսի հանգույցային հիմնախնդիրներ, ինչպես Արաբական երկրների և Մերձավոր ու Միջին Արևելքի ժողովուրդների պատմությունը, ազգային ազատագրական շարժումները և անկախ արաբական երկրների կազմավորումը, միջազգային և միջարաբական հարաբերությունները, քաղաքական իսլամը, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը և էրնոքաղաքական առնակատումները, Հայոց ցեղասպանությունը, հայ-արաբական հարաբերությունները և հայ համայնքների դերը արաբական երկրներում և այլն: Այդ հարցերի վերաբերյալ հրատարակել է ավելի քան 500 աշխատություն, այդ թվում՝ 80 մենագրական հետազոտություն, որոնց զգալի մասն արտասահմանում՝ ԱՄՆ-ում, Անգլիայում, Գերմանիայում, Իտալիայում, Ռուսաստանում, Թուրքիայում, Ճապոնիայում, Կորեայում, Հունգարիայում, Ռումինիայում, Լիբանանում, Սիրիայում, Եգիպտոսում , Իրանում, Կանադայում և այլ երկրներում, աշխարհի տարբեր լեզուներով: Դրանց շարքում այնպիսի հիմնարար ուսումնասիրություններ, ինչպես՝ «Արաբական երկրների պատմություն (VII դ. -2005թ.)» քառահատորյակը, որը 2007թ. արժանացել է ՀՀ պրեզիդենտի մրցանակին, իսկ 2011թ. թարգմանվել և հրատարակվել է արաբերեն Հալեքում, «Հայոց ցեղասպանություն. Արմենոցիդ՝ ամենացեղասպան ցեղասպանություն. Աշխարհի տասը լեզուներով. Անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն, բուրբերեն, ճապոներեն, հունգարերեն,

հայերեն, արաբերեն, պարսկերեն», որը 2010թ. ստացել է ՀՀ Սշակույթի նախարարության Առաջին կարգի դիպլոմ և այլն:

1985թ. Սիրիայի Բարձրագույն կրթության նախարարության հրավերով գիտահետազոտական ուսումնասիրություններ է կատարել Դամասկոսի և Հալեբի համալսարաններում, 1989թ. Բրիտանական ակադեմիայի հրավերով Լոնդոնի ու Էդինբուրգի համալսարաններում և Միջազգային հարաբերությունների արքայական ինստիտուտում (Չարամ Հաուզ), շահելով Ֆուլբրայթի մրցույթում, 1993-1994թթ. մոտ մեկ տարի աշխատել է Ջորջ Վաշինգտոնի համալսարանում, 1995թ.՝ Սերիլենդի համալսարանում (ԱՄՆ) և այլն: Նրա ակտիվ մասնակցությամբ 2007թ. Կահիրեի համալսարանում հիմնվել է Հայկական հետազոտությունների կենտրոն:

Անդամ է մեկ տասնյակից ավելի արտասահմանյան ակադեմիաների և գիտական ընկերությունների, այդ թվում՝ Նյու Յորքի գիտությունների ակադեմիայի, «Արարատ» գիտությունների միջազգային Ակադեմիայի (Փարիզ), Ազգային անվտանգության հիմնախնդիրների գիտությունների միջազգային ակադեմիայի (Մոսկվա), Ազգային անվտանգության հիմնախնդիրների գիտությունների Համահայկական ակադեմիայի (Երևան), Բնության և հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի (Գերմանիա), Աշխարհի ժողովուրդների հոգևոր միասնության միջազգային ակադեմիայի (Մոսկվա), ինչպես նաև Սիրիայի Արաբական գիտության պատմության ընկերության, ԱՄՆ-ի Ազգային աշխարհագրական ընկերության, Յեղասպանագետների Միջազգային ասոցիացիայի, Քաղաքական գիտության Հայաստանի ասոցիացիայի և այլն: Զեմբրիջի, Անգլիա, Միջազգային կենսագրական կենտրոնը 2004թ. նրան հռչակել է «XXI դարի ականավոր գիտնական», 2005թ.՝ «Աշխարհի առաջատար գիտնական», իսկ 2009թ.՝ ներառել «100 ամենաարժրավար գիտնականների» ցանկում:

Անդամ է Եգիպտոսի Արաբական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջակառուվարական համատեղ հանձնաժողովի Հայկական մասի, Հայաստանի Կոնֆլիկտների լուծման կենտրոնի հիմնադիր-անդամն է, Հայ առաջնության ասոցիացիայի պրեզիդենտը: Երկար տարիներ եղել է Խորհրդային-արաբական քարեկամության ասոցիացիայի վիցե պրեզիդենտ, Հայ-արաբական քարեկամության և մշակութային կապերի Հայկական ընկերության պրեզիդենտ և այլն:

Պարգևատրված է ՀՀ ԳԱԱ Գովեստագրով, Մովսես Խորենացու, ՀՀ Պաշտպանության նախարարության «Կազգեն Սարգսյան» և «Հայկական զինված ուժեր 1992-2012», «Բարեկամության բնագավառում ներդրման համար» (Մոսկվա) մեդալ-

ներով, ՀՀ Կառավարության «Հայոց Սեծ Եղեռն» ոսկեգօծ մեդալով, Ֆրիտյոֆ Նանսեն հուշամեդալով, «Արարադյան Շարժում» (ԼՂՀ) , «Հայաստան-Եզիպտոս. 15 տարի. Դիվանագիտական հարաբերություններ» մեդալներով, զանազան Պատվոգրերով և այլն:

NIKOLAY HOVHANNISYAN

Doctor of History, Professor

Correspondent Member of National Academy of Science, Armenia

Honoured Scientist

Adviser to the Director of the Institute of Oriental Studies NAS Armenia and to the Chief of the Institute of National Strategic Studies after D.Kanayan, Ministry of Defense
Republic of Armenia

THE ARMENIAN COMMUNITIES OF THE MIDDLE EAST AND SYRIA AND THEIR PERSPECTIVES

